

Ռուս-Ճապոնական հարաբերությունները արդի դարաշրջանում

Կոստանդյան Լուսինե

Հանգուցային քառեր. Ռուսաստան, Ճապոնիա, Կուրիլյան կղզիներ, դիվանագիտական հարաբերություններ, բանակցություն, տարածքային հակամարտություն, հաշտության պայմանագիր, խաղաղություն

Նախաբան

Ռուսաստանի և Ճապոնիայի միջև հարաբերությունների ձևավորման հարցում խիստ կարևորվում են քաղաքական, առևտրատնտեսական, մշակութային, հասարակական գործոնները: Մակայն արդի փուլում երկկողմ հարաբերությունների կառուցման հիմքում սկզբունքային դեր են խաղում նաև պատմական առանցքային իրադարձությունների վերլուծությունը և այդ իրադարձությունների հետևանքով ձևավորված միջազգային իրադրությունը:

Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը քաղաքական, տնտեսական, ռազմաստրատեգիական գործընթացների բուռն զարգացման գոտի է: Այդ գործընթացների կարևոր մասն են կազմում ռուս-ճապոնական հարաբերությունները, որոնք առանձնանում են դինամիկ զարգացմամբ: Կողմերը չեն նախաձեռնում համագործակցության զարգացման նոր ռազմավարություն, ինչը կբխի Ասիական և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային գլոբալ հիմնախնդիրների կարգավորման շահերից:

Ռուս-ճապոնական արդի հարաբերությունների վերլուծությամբ փորձ է արվում ներկայացնել այդ հարաբերությունների օբյեկտիվ պատկերը՝ ընդգծելով ունեցած ձեռքբերումներն ու անհաջողությունները: Խիստ կարևոր է նաև Կուրիլյան կղզիների շրջանում տարածքային սահմանազատման հակամարտությունը, որը ռուս-ճապոնական խաղաղության պայմանագրի ստորագրման հետ կապված լուրջ խոչընդոտների է հանգեցրել: Տարածքային վեճերը հիմնավորապես խափանում են երկկողմ հարաբերությունների զարգացումը բոլոր ոլորտներում: Խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված քայլերը անհաջողությամբ են պսակվել, քանի որ տարածքային հակամարտության լուծման առաջարկված տարբերակները անընդունելի են կողմերի համար:

Ռուս-ճապոնական հարաբերությունները, բացի տարածքային խնդիրներից, այլ ոլորտներում բնականոն զարգացման ընթացք են ապա-

հովում: Թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ անվտանգային նպաստավոր միջավայրի ձևավորման հարցում չկա որևէ այլ խոչընդոտ, սակայն տարածքային վեճը բարդացնում է երկկողմ հարաբերությունների բարելավման գործընթացը:

Ռուս-ճապոնական ժամանակակից հարաբերությունները

Ռուս-ճապոնական հարաբերություններում XXI դարի առաջին տասնամյակում աննախադեպ դրական տեղաշարժ արձանագրվեց: ԽՍՀՄ-ի փլուզումը ռուս-ճապոնական հարաբերությունների զարգացման նոր փուլ նախանշեց: Դա պայմանավորվեց միջազգային իրադրության կտրուկ շրջադարձով և սառը պատերազմի ավարտով: ԽՍՀՄ-ի նախագահ Մ. Ս. Գորբաչովի, այնուհետև Ռուսաստանի նախագահ Բ. Ն. Ելցինի ճապոնիա կատարած պաշտոնական այցերի շրջանակում բարձրաձայնվեցին երկու երկրների միջև տարածքային տարաձայնությունների առկա խնդիրները և այն շուտափույթ կարգավորելու, հաշտության պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը, ինչը ամրագրվեց Տոկիոյի համաձայնագրով [9, 311]: Սակայն հետագա տարիներին այս ուղղությամբ որևէ դրական տեղաշարժ չարձանագրվեց կողմերի միջև սկզբունքային տարաձայնությունների առկայության պատճառով: Ճապոնական կառավարության հակառուսական տրամադվածությունը պաշտպանեց նաև իշխող Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, ինչպես նաև ճապոնական խորհրդարանի պատգամավորները՝ բազմիցս ընդունելով բանաձևեր հյուսիսային տարածքների վերադարձման վերաբերյալ: Երկկողմ հարաբերությունների ձևավորումը բխում էր երկու կողմերի շահերից. ճապոնական կողմը ակնկալում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կազմում ընդգրկվելու հարցում Մոսկվայի աջակցությունը: Ռուսաստանը Մեծ ութնյակի, Միջազգային արտարժույթային ֆոնդի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության լիիրավ անդամ դառնալու հարցում խիստ զգում էր ճապոնական կողմի միջամտության կարիքը:

Արևելյան Ասիայի տարածաշրջանում XX դարի 90-ական թվականներին տնտեսական զարգացման բարձր ցուցանիշներ գրանցվեցին՝ ի տարբերություն Ռուսաստանի Սիբիրյան և Հեռավորարևելյան շրջանների, որտեղ այս ժամանակահատվածում ռուսական կառավարության սխալ քաղաքականության արդյունքում տնտեսական շոշափելի դժվարություններ ի հայտ եկան: XXI դարի սկզբին Ռուսաստանի աշխարհաքաղաքական ծրագրերը Սիբիրում և Հեռավոր Արևելքում լուրջ մարտահրավերներ էին կանխատեսում Արևելյան Ասիայի պետությունների հետ

հարաբերություններում: Տարածաշրջանում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դերակատարման կարևորության հարցում հատուկ նշանակություն ունեն Ճապոնիայի հետ համագործակցության ակտիվացումը:

2009 թվականի սեպտեմբերին Ճապոնիայում տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում ձևավորվեց նոր Դեմոկրատական կուսակցության կառավարություն՝ Յուկիո Խատոյամայի գլխավորությամբ, ով երկրի քաղաքական և հասարակական համակարգի, ինչպես նաև արտաքին քաղաքականության կտրուկ բարեփոխումների ծրագիր որդեգրեց [1, 325]: Այդ ծրագիրը նախատեսում էր Արևելյան Ասիայի երկրների համագործակցություն, որը ենթադրում էր Վաշինգտոնից անկախ քաղաքականության ձևավորում: Նման համարձակ դիրքորոշումը Արևելյան Ասիայի պետությունների, ինչպես նաև Ռուսաստանի համար գրավիչ դարձրեց համագործակցությունը Ճապոնիայի հետ:

Ճապոնական դիվանագիտության երկնագույն գրքում, որը հրատարակվեց 2010 թ. գարնանը, բացահայտված է Ճապոնիայում ձևավորված կոալիցիոն կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղվածությունը [9, 325]: Փաստաթղթի այն բաժինը, որը վերաբերում էր Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը, փաստում էր, որ Ռուսաստանը Արևելյան Սիբիրի և Հեռավոր Արևելքի զարգացման հեռանկարները անմիջականորեն կապում է Ճապոնիայի հետ կառուցողական երկխոսություն ձևավորելու քաղաքականության հետ: Ճապոնիայի և Ռուսաստանի համագործակցությունը ոչ միայն բխում է երկու երկրների ռազմավարական հետաքրքրություններից, այլև նպաստում է տարածաշրջանի կայուն տնտեսական զարգացմանը: Ճապոնական դիվանագիտության երկնագույն գրքում մատնանշվում է, որ նախանշված երկկողմ հարաբերությունների կայունացումը իրատեսական չի լինի առանց հյուսիսային տարածքների խնդրի լուծման, որի կարևորությունն, ըստ Ճապոնական վերլուծաբանների, արմատական նշանակություն ունի:

Յուկիո Խատոյամայի կառավարության՝ Ռուսաստանի հետ առնչվող բոլոր համապետական հայտարարություններում, փաստաթղթերում անդրադարձ է կատարված երկու երկրների միջև առկա տարածքային խնդրին: Դա վկայում է այն մասին, որ նորընտիր դեմոկրատների կուսակցության հայեցակարգում կարևորված է Ռուսաստանի հետ հաշտության պայմանագրի բացակայության և տարածքային անհամաձայնության հարցը, ի տարբերություն նրանց նախորդների՝ լիբերալ-դեմոկրատական կուսակցության [5, 135]:

XX դարի 80-ական թվականներին Ճապոնիայում սկսվեց հյուսիսային տարածքների վերադարձման շուրջ ակտիվ շարժում, որի շուրջը միավորվեցին հիմնական քաղաքական ուժերը: Ռուսաստանի հետ տարածքային խնդիրների լուծման մի քանի տարբերակներ էին քննարկվում, որոնցից առավել առաջնայինը Ռուսաստանի հետ բոլոր տարածքային վեճերի անհապաղ լուծումն էր: Ռուսաստանը պետք է ճանաչեր չորս կողմների նկատմամբ ճապոնական կողմի տարածքային իրավունքը՝ հետագայում դրանք վերադարձնելու պայմանով: Հաջորդ տարբերակը ենթադրում էր չորս կողմների ընդհանուր տարածքի 50 տոկոսի հանձնումը ճապոնական կողմին կամ հարցի հետաձգումը մինչև Հարավային Կուրիլներում երկու երկրների համատեղ տնտեսական գործունեության արդյունքում առավել բարենպաստ դիվանագիտական գործունեություն ծավալելու միջավայրի ապահովում [9, 328]: Սակայն կառավարող դեմոկրատական թևի համար այս տարբերակը ընդունելի չէր, քանի որ այն կարող էր դժգոհության ալիք բարձրացնել ճապոնական ազգայնամուլների շրջանում: Տարբերակը անընդունելի էր նաև Սախալինի մարզի բնակչության շրջանում, որը կտրականապես դեմ էր որևէ տարածքային զիջման: Կողմների հանձնումը կարող էր այլ պետությունների՝ Ֆինլանդիայի, Էստոնիայի, Գերմանիայի կողմից տարածքային պահանջներ առաջադրելու նախադեպ դառնալ: Նման որոշումը կարող էր տարածքային նոր հավակնությունների ալիք բարձրացնել Ճապոնիայում: Ճապոնական ազգայնամուլ քաղաքական ուժերը՝ ուլտրա-ազգայնականները և կոմունիստները, կարող են պահանջել ոչ միայն Հարավային Կուրիլների, այլ ամբողջ Կուրիլյան կղզիների և Հարավային Սախալինի հանձնումը ճապոնական կողմին:

Կողմների հանձնումը զգալի տնտեսական և ռազմաստրատեգիական վնաս կհասցնի Ռուսաստանին՝ առևտրական, ռազմական նավերի, սուզանավերի երթուղիների փոփոխությամբ պայմանավորված: Տարածքային տարածայնությունները ակնհայտորեն խոչընդոտում են երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների օրինաչափ զարգացումը, համատեղ ձեռնարկությունների հիմնադրման իրավական կարգավորման գործընթացը: Վերջին տարիներին Ռուսաստանում բիզնես ծրագրերի ներդրման աճի տենդենց է գրանցվում, գերակշիռ է դառնում արտադրող ձեռնարկությունների, բարձր տեխնոլոգիաների, ծրագրերի ներդրման գործընթացը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում, որը չըջանցեց թե Ռուսաստանը և թե Ճապոնիան, Ռուսաստանում շարունակեցին աճել ճապոնական ներդրումային

ծրագրերը: Ճապոնական կողմի նման դիրքորոշումը պայմանավորված էր տարածաշրջանում որոշակի հավասարակշռության պահպանման միտումով: Վերջին տարիներին Ճապոնական արտադրողները բախվում էին չինական ձեռնարկությունների սուր հակազդեցությանը, որոնք կարողանում էին հաջողությամբ օգտագործել Ճապոնական տեխնոլոգիաները և ներդրումային ծրագրերը: Այս առումով Ռուսաստանը կարող էր հաջող այլընտրանքային տարբերակ ծառայել Ճապոնիայի համար ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով [7, 6]:

Ռուս-Ճապոնական դիվանագիտական հարաբերությունների կարգավորման գործում մինչ օրս մեծ դեր են խաղում պատմության բացասական էջերը, որոնց մեջ առանձնանում են հատկապես տարածքային խնդիրները: Հարաբերությունների կարգավորման փորձեր բազմիցս ձեռնարկվել են, սակայն ավարտվել են մասնակի կամ ամբողջական ձախողմամբ: Տարածքային խնդրի լուծման հարցում առաջընթացի բացակայությունը պայմաններ է ստեղծում երկկողմ հարաբերությունների վատթարացման համար և լրջորեն բարդացնում է այդ խնդրի կարգավորման համար դրական տեղաշարժերի արձանագրմանը: Բացառությամբ տարածքային խնդրի, Ռուսաստանի և Ճապոնիայի միջև չկան այլ խնդիրներ քաղաքականության, տնտեսության կամ անվտանգության ապահովման ոլորտներում, որոնք կարող են խոչընդոտել իրական գործընկերային հարաբերությունների ձևավորմանը: Ընդհակառակը՝ առկա է կայունություն ապահովելու փոխադարձ ձգտում:

Երկկողմ հարաբերությունների կարգավորման գործում հատկանշական էր հատկապես 2011 թ. փետրվարին տարածքային վեճի սրման պահին Ճապոնիայի արտաքին գործերի նախարար Սեյձի Մաեհարայի՝ Մոսկվա կատարած այցը, որի ընթացքում վերահաստատվեց հրատապ միջազգային հարցերի շուրջ երկու երկրների միջև համագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը: Վերոնշյալ այցի ժամանակ որոշում կայացվեց Կորեական թերակղզու ապամիջուկայնացման, միջազգային ահաբեկչությանը հակազդելու հարցերում ավելի սերտ համագործակցության վերաբերյալ [5, 138]:

Վերջին տարիներին Ռուսաստանի քաղաքական և պաշտոնական շրջանակներում որոշակի հետաքրքրություն է նկատվում Ճապոնիայի հետ հարաբերությունների զարգացման և կարգավորման հարցում, սակայն ակնհայտ է, որ Տոկիոյի հետ հարաբերությունների զարգացումն ու կարգավորումը իրենց առաջնահերթությամբ զիջում են այլ խոշոր պետությունների հետ հարաբերությունների զարգացմանը: Սա հատկա-

պես նկատելի է արևելյան ուղղությամբ, որտեղ գերիշխում է դեպի Պեկին կողմնորոշումը: Դա նաև պայմանավորված էր Ճապոնիայի անկայուն քաղաքական իրավիճակով, այդ թվում՝ կառավարության ղեկավարների հաճախակի փոփոխություններով, որը անհնարին էր դարձնում գործընկերների հետ երկարաժամկետ լուրջ և կարևոր պայմանավորվածությունների ձեռքբերումը:

Ռուսական կողմի համար կարևոր նշանակություն ունեւ Ճապոնիայի հետ հարաբերությունների կարգավորումը ընդուպ մինչև ռազմավարական գործընկերություն, որը հնարավորություն կտար լուծել Չինաստանի և Ճապոնիայի հետ Ռուսաստանի հավասարակշռված հարաբերությունների ապահովման խնդիրը, ինչպես նաև ամրապնդել դիրքերը ԱՄՆ-ի հետ հարաբերություններում, քանի որ Վաշինգտոնը չափազանց սուր էր արձագանքում ռուս-ճապոնական հարաբերություններում ցանկացած դրական տեղաշարժերին, հաճախ նաև միջոցներ ձեռնարկում՝ խոչընդոտելով հարաբերությունների կարգավորմանն ուղղված յուրաքանչյուր փորձ [11]:

Իր հերթին Տոկիոն վախենում էր Չինաստանի ռազմական ներուժի աճից: Չինացիները ճապոնացիներին վստահորեն երկրորդ պլան էին մղում ոչ միայն համաշխարհային տնտեսական ասպարեզում, այլև Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում՝ ակնհայտորեն փորձելով ցույց տալ իրենց գերիշխող դերը տարածաշրջանում: Այս իրավիճակում Ճապոնիայի ղեկավարությունը կարծում էր, որ պետք էր ամրապնդել ռազմավարական հարաբերություններն ԱՄՆ-ի հետ, սակայն դա ակնհայտորեն սահմանափակում էր ինքնուրույն գործողությունների հնարավորությունները, քանի որ Տոկիոյում հստակ պատկերացում չկար Չինաստանի նկատմամբ Վաշինգտոնի մտադրությունների մասին: Ճապոնական քաղաքական էլիտան չէր ցանկանում ներքաշվել Չինաստանի զսպման ամերիկյան ռազմավարության մեջ, քանի որ մեծ հարևանի հետ հարաբերությունների վատթարացումը կարող էր հանգեցնել բազմաթիվ քաղաքական և տնտեսական կորուստների: Մյուս կողմից, Տոկիոյին դուր չէր գալիս Պեկինի «կրտսեր գործընկեր» դառնալու հեռանկարը, այդ պատճառով նրան ձեռնտու էր Ռուսաստանի հետ ավելի առաջադեմ հարաբերությունների ձևավորումը՝ նպատակ ունենալով զսպել չինական գործոնը:

Ըստ ճապոնացի վերլուծաբանների՝ Ճապոնիան ևս պետք է հետևեր Մեուլի օրինակին՝ բարելավելով Մոսկվայի հետ հարաբերությունները, ինչի արդյունքում հարավկորեացիները հասել էին միջուկային խնդրի

շուրջ Փենյանի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման խստացմանը և Կորեական թերակղզում ռազմական ուժի կիրառման հետ կապված միջադեպերի զսպմանը [4, 38]:

2011 թվականին Ճապոնիայում կատարված հարցումները ցույց են տվել, որ աշխարհի խոշորագույն երկրների շարքում ճապոնացիներն ամենաքիչը բարեկամական են համարում Ռուսաստանին, իսկ ամենաշատը՝ ԱՄՆ-ին: Ռուսաստանի նկատմամբ Ճապոնիայում նման վերաբերմունքի պատճառները պայմանավորված են Ռուսաստանի կայուն բացասական կեցվածքով, որը ձևավորվել էր հիմնականում հետպատերազմյան դարաշրջանում: Նրանց նման վերաբերմունքը հարևան երկրի նկատմամբ հիմնականում պայմանավորված էր չեզոքության պայմանագրի խախտմամբ և ԽՍՀՄ-ի՝ Ճապոնիայի դեմ պատերազմի մեջ մտնելով, խորհրդային ճամբարներում ավելի քան 60 հազար ճապոնացի ռազմագերիների մահվամբ, ճապոնական տարածքների գրավմամբ և Ճապոնիայում կոմունիստական գաղափարախոսություն տարածելու փորձերով: Խորհրդային Միության փլուզումից հետո ևս նշված կարծրատիպերը շարունակում էին գերակշռել Ճապոնիայում՝ կապված վիճելի կղզիներում ժամանակակից սպառազինությունների տեղակայման, ճապոնական սահմանների մոտ ռուսական ռազմաօդային ուժերի հեռահար թռիչքներ իրականացնելու հետ: Ճապոնացի պատմաբանները, գիտնականները և քաղաքագետները ոչ միայն հակառուսական տրամադրություններ ունեին, այլև ակտիվորեն պահանջում էին «հյուսիսային տարածքների» վերադարձը, առանց որի, ըստ նրանց, Երկրորդ աշխարհամարտը Ճապոնիայի համար չէր կարող ավարտված համարվել [10]:

Ճապոնական կողմի հետ խաղաղության պայմանագրի կնքման շուրջ տևական բանակցությունների փորձը մոտ ապագայում կարող ենք բացառել, քանի որ կողմերի տարաձայնություններն ունեն սկզբունքային նշանակություն: Ոչ միայն ճապոնական իշխող շրջանակները, այլև հասարակության ճնշող մեծամասնությունը պահանջում էին Ռուսաստանից վերադարձնել Խաբոմայի, Շիկոտանի, Կունաշիրի, Իտուրուլի կղզիները, որոնք ապօրինաբար օտարվել էին Ճապոնիայից Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Դրա հետ մեկտեղ ներկայումս Ճապոնիայում առկա է քաղաքական գործիչների, գործարար շրջանակների ներկայացուցիչների, գիտնականների և լրագրողների բավական ազդեցիկ խումբ, ովքեր, դատելով ճապոնական ազգային շահերի տեսանկյունից, հասկանում էին, որ պետք է ազատվել ԱՄՆ-ի վարած կոշտ քաղաքականությունից, դիմակայել Չինաստանին, և կառուցողական և

բազմակողմանի հարաբերություններ հաստատել Ռուսաստանի հետ: Ճապոնիայի Արտաքին գործերի նախարարությունը, որն աչքի էր ընկնում այս հարցի շուրջ իր քննադատական տրամադրվածությամբ, այն կարծիքն էր արտահայտում, որ Վ. Պուտինի նախագահության օրոք այս հարցը իր վերջնական լուծումը չի կարող ստանալ: Նրանք դա հիմնավորում էին, որ լավագույն դեպքում ռուսական կողմը կարող է կրկնել 1956 թ.-ի հռչակագրի 9-րդ հոդվածը քննարկելու առաջարկը՝ Հաբոմայի և Շիկոտանի վերադարձի հարցը՝ այնտեղ ռուսական ինքնիշխանությունը պահպանելու պայմանով: Ըստ էության դա կրկնում էր նախագահ Վ. Պուտինի 2001 թ. մարտին Իրկուտսկում արված առաջարկությունը՝ սկսել 9-րդ հոդվածի քննարկումը [7, 14]:

Ճապոնիայում որոշ քաղական շրջանակներ այն կարծիքին են, որ անհրաժեշտ է խորացնել համագործակցությունը Ռուսաստանի հետ տնտեսական և անվտանգության ոլորտներում: Այս դիվանագիտության հիմնական ուղենիշներից մեկը պետք է լիներ Ռուսաստանի հետ բազմակողմանի հարաբերությունների ստեղծումը: Արդյունքում կարելի է ակնկալել ավելի շահավետ փոխզիջում Ռուսաստանի հետ տարածքային խնդրի շուրջ: Այլ կերպ ասած, պետք է ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ ռուսական կողմի համար ավելի նպատակահարմար կլինի տարածքային խնդիրների շուրջ զիջումների գնալը: Ճապոնիայի Արտգործնախարարությունը, որը որոշում է բանակցային մարտավարությունը և ռազմավարությունը Մոսկվայի հետ հարաբերություններում, դեմ է հանդես է գալիս տարածքային հարցի վերաբերյալ դիրքորոշման փոփոխությանը և նշում, որ Ճապոնական կողմը մոտ ժամանակներս տարածքային խնդրի շուրջ իր սկզբունքային դիրքորոշումից չի հրաժարվելու:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այդ երկրի ազգային շահերին համապատասխանում է Ճապոնիայի հետ հնարավորինս կառուցողական հարաբերությունների ձևավորումը: Ռուսաստանը հայտարարում էր, որ իրենք դեռևս անցյալ դարի 90-ականների վերջին և այս դարի սկզբին ապացուցել են Տոկիոյի հետ իրենց հարաբերությունների բարելավման պատրաստակամությունը [10]: Այդ ժամանակ Ճապոնիան «յոթնյակի» երկրների շարքում առավել բարենպաստ դիրք էր գրավում Ռուսաստանի հետ համատեղ ծրագրեր իրականացնելու հարթակում՝ պայքար ահաբեկչության դեմ Կովկասում, մարդու իրավունքների պաշտպանություն, տնտեսական օգնության տրամադրում դեֆոլտից հետո, անդամակցում Ասիական և Խաղաղօվկանոսյան տնտեսական խորհրդին և այլն: Նման հարաբերությունների պահպանման համար անհրաժեշտ է

մշտական, համառ և նախաձեռնողական աշխատանք տանել ճապոնական քաղաքական էլիտայի, գործարար շրջանակների և հասարակության հետ: Անհրաժեշտ է ունենալ հստակ մտածված ռազմավարություն, գործել համալիր՝ հաշվի առնելով բոլոր փոխկապակցված գործոնները: Քաղաքական ոլորտում շատ կարևոր է կարգավորել և կանոնավոր կերպով պահպանել շփումներն ու երկխոսությունը արտաքին քաղաքական գերատեսչությունների մակարդակով:

Ըստ Ռուսաստանի՝ հարաբերությունների կարգավորման համար նպատակահարմար է ստեղծել երկկողմանի հասարակական կառույց՝ «Ռուս-ճապոնական հարաբերությունների զարգացման կոմիտե», որում պետք է ընդգրկված լինեն ռուս և ճապոնացի քաղաքական և հասարակական գործիչներ, գիտնականներ: Վերջիններս պետք է ուղիներ որոնեն երկու երկրների հարաբերությունների բարելավման համար: Անհրաժեշտ է ուսումնասիրել նաև երկկողմ հարաբերությունների պատմական անցքերը, ինչը կնպաստի տարածված կարծրատիպերի հաղթահարմանը: Դա թույլ կտա ազատվել ճապոնական կողմի կշտամբանքներից, թե իբր Ռուսաստանում բավարար տեղեկացված չեն երկկողմ հարաբերությունների ձևավորման հիմքում ընկած պատմական իրադարձություններից, բացի այդ՝ հնարավորություն կընձեռվեր ճապոնական հանրությանը ցույց տալ մի շարք հակափաստարկներ՝ հիմնավորված պատմական և պատմաիրավական փաստաթղթերով [10]:

Չնայած Ռուսաստանի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքին՝ ճապոնական կողմը շարունակում է Կուրիյան կղզիներում գործող ռուսական օրենսդրության հիման վրա այնտեղ տնտեսական գործունեություն ծավալել: Ճապոնական կողմը հանդես էր գալիս նաև 2000 թվականին ստորագրված համաձայնագիրը կյանքի կոչելու վերաբերյալ նախաձեռնությամբ, ըստ որի՝ երկու կողմերը Իտուրուպ, Կունաշիր, Շիկոտան և Հաբոմայի կղզիներում պետք է մշակեին համատեղ տնտեսական գործունեության և համագործակցության զարգացման ծրագրեր, այդ թվում՝ նաև միմյանց լեզուների ուսուցում, մտքերի փոխանակում բնապահպանական թեմաների շուրջ, համատեղ բնապահպանական հետազոտությունների իրականացում: Հաշվի առնելով Ճապոնիայում բնական աղետների առկայությունը՝ արդիական են դառնում նաև համատեղ գիտական հետազոտությունների իրականացումը սեյսմիկ գոտիների տարածքում [8, 108-109]:

2012-2020 թթ. Ճապոնիայում իշխանության եկած Սինդձո Աբեի կառավարությունը նկատելի մեղմացրեց տարածքային պահանջների

հարցում կառավարության ձևավորած կոշտ քաղաքականությունը, ինչի ակնհայտ դրսևորումը Վ. Վ. Պուտինի հետ տեղի ունեցած 27 հանդիպումներն են: Մինդձո Աբեի կառավարությունը հետաքրքրված էր տարածքային խնդրի լուծման հարցով և նույնիսկ քայլեր իրականացրեց հարավային Կուրիլյան կղզիների տարածքում տնտեսական գործունեության ակտիվացման ուղղությամբ: Սակայն առողջական խնդիրների պատճառով Մինձո Աբեն հրաժարական ներկայացրեց կառավարության ղեկավարի պաշտոնից, և Բանակցային գործընթացը կրկին մտավ ձախողումների փուլ: Արդեն Եոխիդե Մագայի պաշտոնավարման շրջանում ռուս-ճապոնական հարաբերություններում նկատելի սառեցում արձանագրվեց, իսկ 2021 թ. հոկտեմբերին Ճապոնիայի նոր վարչապետ Ֆումիո Կիսիդան պաշտոնապես հայտարարեց, որ Կուրիլյան կղզիների հարավային մասը համարում է Ճապոնիայի ինքնիշխան տարածք: Ի պատասխան այդ հայտարարության՝ ՌԴ Արտգործնախարարությունը ևս մեկ անգամ հիշեցրել է Ճապոնական կողմին, որ դա ռուսական տարածք է, և Ճապոնական կողմի նման դիրքորոշումը միայն կբարդացնի իրավիճակը հետագա բանակցություններում [12, 2]:

Ներկայումս երկու պետությունների միջև հաշտության պայմանագրի կնքման շուրջ բանակցությունները թևակոխել են բարդ փուլ:

Եզրակացություն

Շոդվածում փորձ է արվել ներկայացնել ռուս-ճապոնական հարաբերությունների զարգացման հնարավորությունները ժամանակակից փուլում: Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո մինչ օրս այդ հարաբերությունները զարգացել են մի շարք ուղղություններով, սակայն քաղաքական ոլորտում դեռևս կան արմատական տարաձայնություններ՝ կապված տարածքային խնդիրների հետ: Երկու երկրների կոշտ դիրքորոշումները «հյուսիսային տարածքների» հարցում խոչընդոտում է դիվանագիտական հարաբերությունների զարգացմանը և հաշտության պայմանագրի կնքմանը, ինչը անմիջականորեն վնասում է առևտրատնտեսական, մշակութային, հասարակական ոլորտներում առողջ համագործակցային միջավայրի ձևավորմանը: Ռուսաստանի և Ճապոնիայի միջև դիվանագիտական հարաբերությունների ձևավորման հարցում անհրաժեշտ է կարևորել հետևյալ փաստարկները.

- Գնահատել և համադրել ժամանակակից փուլում ռուս-ճապոնական հարաբերությունների զարգացման վրա անմիջականորեն ազդող դրական և բացասական գործոնները:

- Վերլուծել ճապոնական կոալիցիոն կառավարության արտաքին քաղաքականության ուղենիշները:
- Համադրել ներքին և արտաքին քաղաքական գործոնները, որոնք կարող են անմիջական ազդեցություն ունենալ ռուս-ճապոնական հարաբերությունների զարգացման վրա:
- Կարևորել ճապոնիայի և Ռուսաստանի անմիջական հարևան պետության՝ Չինաստանի տնտեսական և քաղաքական աճող դերը տարածաշրջանում, ինչը կարող է լուրջ հակակշիռ ստեղծել ամերիկյան գերակշռող ազդեցությանը Հարավարևելյան Ասիայում և նոր ինտեգրման գործընթացների զարգացման հիմք հանդիսանալ:

Գրականություն

1. Аладьян В.В. Россия и Япония: пропущенные вехи на пути к мирному договору. М., 2001, -240 с.
2. Бунин В.Н. Японо-американский союз безопасности: История и современность: (К 50-летию со дня основания). М., 2000. -331 с
3. Бунин В. Японо-американская совместная декларация по безопасности. М., 1996.
4. Герчиков О. Корейский синдром // Аргументы и факты. 2005, № 27
5. Еремин В. Россия-Япония. Территориальная проблема: поиск решения. М., 1992, -189 с.
6. Жуков А.Е. История Японии. 1868-1998. Т. II. М, 1999, -703 с.
7. Коростиков М.Ю. Россия и Япония встали на повороте // Газета «Коммерсантъ». 2018. № 48.
8. Обзор внешнеэкономической деятельности Дальневосточного региона за 9 месяцев 2020 года // Таможенная политика России на Дальнем Востоке. 2020, № 4, с. 108-109.
9. Панов А.Н. Россия и Япония: становление и развитие отношений в конце XX - начале XXI века. М., 2007, -312 с..
10. Панов А.Н. и др. Современные российско-японские отношения и перспективы их развития. М., 2012. -32 с.
11. Территориальная проблема между японией и россияей. За отношения истинного доверия. Электронный ресурс. Режим доступа: <https://www.lt.emb-japan.go.jp/files/000084423>
12. Япония идет на обострение с Россией? // Аргументы недели. 2021. № 39.

Российско-японские отношения в современную эпоху

Костандян Лусине

Резюме

Ключевые слова: *Россия, Япония, Курильские острова, дипломатические отношения, переговоры, территориальный конфликт, мирный договор, мир*

В статье представлены пути развития российско-японских дипломатических отношений в первой четверти XXI века и возможности преодоления существующих препятствий. После второй мировой войны, существующие территориальные вопросы между двумя странами привели к замораживанию двусторонних отношений, но на нынешнем этапе геополитические вызовы привели к необходимости кардинального пересмотра отношений, что вытекало из интересов обеих стран.

В 90-е годы 20 века политическая роль России в восточноазиатском регионе резко возросла, что проявилось активизацией в сфере сотрудничества с Японией в политической, торгово-экономической и культурной сферах. Наиболее сложные отношения сформировались в политико-дипломатическом направлении, что было обусловлено отсутствием мирного договора между Россией и Японией. Москва и Токио десятилетиями ведут переговоры по поводу территориального спора о принадлежности японских островов, однако из-за противоречивых позиций двух сторон существенных результатов не было зафиксировано. Жесткие позиции двух стран в отношении «северных территорий» препятствуют развитию дипломатических отношений и заключению мирного договора, что наносит прямой ущерб формированию здоровой среды сотрудничества в торгово-экономической, культурной и общественной сферах. Относительно формирования дипломатических отношений между Россией и Японией необходимо подчеркнуть следующие аргументы:

- оценить и сопоставить положительные и отрицательные факторы, непосредственно влияющие на развитие российско-японских отношений на современном этапе;
- проанализировать внешнеполитические ориентиры японского коалиционного правительства;
- сравнить внутренние и внешние политические факторы, которые могут оказать непосредственное влияние на развитие российско-японских отношений;
- подчеркнуть растущую экономическую и политическую роль Китая,

ближайшего соседа Японии и России в регионе, что может создать серьезный противовес доминирующему американскому влиянию в Юго-Восточной Азии и стать основой для развития новых интеграционных процессов.

В статье мы также постарались осветить позитивные изменения и существующие разногласия, зафиксированные в первой четверти XXI века в российско-японских отношениях. Мы представили позиции внутриполитических сил двух стран относительно территориальных разногласий и варианты обсуждаемого решения.

Russian-Japanese Relations in the Modern Era

Kostandyan Lusine

Summary

Key words: *Russia, Japan, Kuril Islands, diplomatic relations, negotiation, territorial conflict, reconciliation agreement, peace.*

The article presents the directions of development in Russian-Japanese diplomatic relations in the first quarter of the 21st century and the possibilities of overcoming the obstacles on the way. After the Second World War, the territorial issues between the two countries had led to the freezing of bilateral relations, but at the current stage, geopolitical challenges have necessitated a drastic review of relations, which is in the interests of both countries.

In the 90s of the 20th century, the political role of Russia in the East Asian region increased dramatically, which was demonstrated by the activation of cooperation with Japan in the political, commercial, economic, and cultural spheres.

The most complicated relations were formed in political and diplomatic directions due to the absence of a peace treaty between Russia and Japan. Moscow and Tokyo have been negotiating over the territorial dispute over the ownership of the Japanese islands for decades, but no significant results have been recorded due to the conflicting positions of the two sides.

The tough positions of the two countries in relation to the “northern territories” impede the development of diplomatic relations and the conclusion of a peace treaty, which directly damages the formation of a healthy environment for cooperation in trade, economic, cultural and public spheres. Regarding the formation of diplomatic relations between Russia and Japan, the following arguments should be emphasized:

- to evaluate and compare the positive and negative factors directly

- affecting the development of Russian-Japanese relations at present stage;
- to analyze the foreign policy guidelines of the Japanese coalition government;
 - to compare internal and external political factors that can have a direct impact on the development of Russian-Japanese relations;
 - to emphasize the growing economic and political role of China, the closest neighbor of Japan and Russia in the region, which can create a serious counterbalance to the dominant American influence in Southeast Asia and become the basis for the development of new integration processes.

In the article, we have also tried to highlight the positive changes and existing disagreements recorded in the first quarter of the 21st century in Russian-Japanese relations. We have presented the positions of internal political forces of the two countries regarding the territorial differences and the options for the discussed solution.

Ներկայացվել է 13.10.2022 թ.
Գրախոսվել է 08.11.2022 թ.
Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.